ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

«10» 05 2022թ. № 326-Ա

ՀՐԱՄԱՆ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՏՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի № 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համակարգին տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին նախապատրաստվող ու

իրականացվող ծրագրերի կառավարման խորհրդի (այսուհետև՝ Խորհուրդ) աշխատակարգը՝ համաձայն № 1 հավելվածի:

2. Հաստատել Խորհրդի անհատական կազմը՝ համաձայն № 2 հավելվածի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

5/4/2022

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ Signed by: SANOSYAN GNEL 1710830069 **Գ. ՍԱՆՈՍՅԱՆ**

ք. Երևան

Հավելված № 1
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
2022 թվականի մայիսի «10»-ի
№ 826-Ա հրամանի

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՏՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետև՝ նախարարություն) համակարգին տրամադրված վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին նախապատրաստվող ու իրականացվող ծրագրերի (այսուհետև՝ ծրագիր) կառավարման խորհուրդը (այսուհետև՝ խորհուրդ) հասարակական հիմունքներով աշխատող մարմին է:

2. Խորհուրդն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության ու վարկատու և դրամաշնորհ հատկացնող երկրի (կամ կազմակերպության) միջև ստորագրված համաձայնագրով (կամ հուշագրով, կամ պայմանագրով) և սույն աշխատակարգով:

3. Խորհրդի և ծրագիր իրականացնող կազմակերպության միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ծրագրի վարկային և (կամ) դրամաշնորհային համաձայնագրով (կամ հուշագրով, կամ պայմանագրով) ու սույն աշխատակարգով:

4. Խորհրդի լրիվ անվանումն է՝ Օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համակարգին տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին նախապատրաստվող ու իրականացվող ծրագրերի կառավարման խորհուրդ:

II. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Խորհրդի գործունեության հիմնական նպատակը ծրագրի իրականացման կառավարումն է:

6. Խորհուրդը հանդես չի գալիս որպես ծրագիր իրականացնող կազմակերպության կառավարման մարմին:

7. Խորհրդի խնդիրներն են՝

ա) ծրագիր իրականացնող կազմակերպության (այսուհետև՝ ընկերություն) կողմից ծրագրի իրականացման գործունեության նկատմամբ վերահսկողությունը.

բ) ծրագրի իրականացման ընթացքում գործողության նախահաշվային արժեքում 100,0 հազ. ԱՄՆ դոլար և/կամ համարժեք դրամ գումարից ավելի փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում առաջարկվող փոփոխությունները՝ համապատասխան հիմնավորումներով, հաստատելը՝ նախապես համաձայնեցնելով վարկատուի հետ.

գ) ծրագրի նախապատրաստական փուլում կանխավճարի կամ դրամաշնորհի առկայության դեպքում այդ միջոցների ծախսման նկատմամբ վերահսկողությունը.

դ) վարկային կամ դրամաշնորհային համաձայնագիրն ստորագրվելուց և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացվելուց (հաստատումից) հետո ծրագրի (ծրագրերի) շրջանակներում իրականացվող աշխատանքների տարեկան ժամանակացույցի, գնումների պլանի և ծրագրի (ծրագրերի) բյուջեի (միջոցառումների տարեկան նախահաշիվների) քննարկումն ու հաստատումը.

ե) ծրագրով նախատեսված և խորհրդի կողմից հաստատված ծրագրի շրջանակներում աշխատանքների իրականացման ժամանակացույցին ու ծրագրի բյուջեին համապատասխան՝ խորհրդի սահմանած կարգով և ձևով հաշվետվությունների հաստատումը.

զ) ծրագրի գնումների պլանի համաձայն՝ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման նպատակով իրականացվող մրցույթների մրցութային փաստաթղթերի փաթեթի և մրցույթի արդյունքների հաստատումը, բացառությամբ՝ մինչև 50,0 հազ. ԱՄՆ դոլար և/կամ համարժեք դրամ արժողությամբ ներքին մրցույթների, ինչպես նաև 8.1 կետի.

է) ծրագրի շրջանակներում տնտեսված միջոցների օգտագործման, ինչպես նաև միջոցների վերաբաշխման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարություն առաջարկություններ ներկայացնելը՝ համաձայնեցնելով համապատասխան վարկատու կազմակերպության հետ.

ը) ընկերության կողմից ներկայացվող հաշվետվություններում հայտնաբերված խախտումների և թերությունների վերացման ուղղությամբ համապատասխան միջոցների ձեռնարկման վերաբերյալ որոշումների ընդունումը և դրանց կատարման նկատմամբ վերահսկողությունը.

թ) ծրագրի՝ հաստատված տարեկան աշխատանքային ժամանակացույցից ու բյուջեից առկա շեղումների վերացման վերաբերյալ որոշումների ընդունումը և դրանց կատարման նկատմամբ վերահսկողությունը.

ժ) անհրաժեշտության դեպքում, միջազգային վարկատու կազմակերպության մասնագետների յուրաքանչյուր այցի ժամանակ արտահերթ նիստ հրավիրելը և պատվիրակության հետ իրականացվող ծրագրի արդյունքները քննարկելը: Արդյունքների մասին Հայաստանի Հանրապետության կառավարություն զեկուցագիր ներկայացնելը.

ժա) ծրագրի ավարտից հետո ծրագրի արդյունքներն ամփոփելը և դրանց մասին Հայաստանի Հանրապետության կառավարություն զեկուցագիր ներկայացնելը:

8. Խորհրդի հաստատմանն են ներկայացվում ընկերության կողմից կազմված՝ մրցույթի հայտահրավերը, ներկայացված մրցութային առաջարկների ամփոփ տեղեկանքը, անվավեր ճանաչված առաջարկների հիմնավորումները, մրցութային հանձնաժողովի՝ հաղթող ճանաչելու մասին որոշումը, նախատեսվող գնի հիմնավորումը (շինարարության նախահաշիվը, ապրանքների՝ տվյալ օրվա մոտավոր միջին գները և այլն), նախատեսվող գնից բարձր գնառաջարկի հիմնավորումը:

8.1. Ծրագրի առանձնահատկություններից ելնելով՝ ծրագիրը գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնելու դեպքում, ընկերության ղեկավարը, առաջնորդվելով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, մրցութային գործընթացի ավարտից հետո մրցույթի արդյունքները համապատասխան փաստաթղթերով ներկայացնում է խորհրդի քննարկմանը:

9. Ընկերության ղեկավարը ծրագրի իրականացման ընթացքում առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, վարկային կամ դրամաշնորհային համաձայնագրի (կամ հուշագրի, կամ պայմանագրի) դրույթներով և խորհրդի որոշումներով:

10. Ծրագրի շրջանակներում առաջացող հարցերը՝ ընկերության տնօրենի ներկայացմամբ, քննարկվում են խորհրդի նիստերում՝ մեկ շաբաթվա ընթացքում:

III. ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

11. Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ և ըստ

անհրաժեշտության՝ ծրագրի իրականացման ընթացքի և հաստատված աշխատանքային ժամանակացույցի կատարման մասին ընկերության ղեկավարի զեկույցը լսելու և քննարկելու նպատակով, ինչպես նաև արտահերթ նիստերի միջոցով՝ սույն աշխատակարգով սահմանված կարգով: Խորհրդի նիստերն արձանագրվում են:

12. Խորհուրդն իր արտահերթ նիստերը գումարում է ծրագրի իրականացման ընթացքում առաջացած հարցերի և խնդիրների լուծման համար՝ խորհրդի նախագահի նախաձեռնությամբ, խորհրդի անդամների առնվազն 1/3-ի կամ ընկերության ղեկավարի առաջարկությամբ:

13. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների կեսից ավելին:

14. Խորհրդի նիստը վարում է խորհրդի նախագահը, իսկ խորհրդի նախագահի բացակայության դեպքում՝ նրա հանձնարարությամբ, խորհրդի անդամներից մեկը: Խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:

15. Խորհրդի նիստի օրակարգը կազմվում և համապատասխան փաստաթղթերով տրամադրվում է խորհրդի անդամներին՝ նիստից 5 օր առաջ:

16. Հարցի քննարկման ընթացքում լրացուցիչ նյութեր կամ տեղեկատվություն պահանջվելու դեպքում հարցի քննարկումը տեղափոխվում է խորհրդի հաջորդ նիստ: Ընկերության ղեկավարը պարտավոր է ապահովել պահանջվող նյութերի տրամադրումը:

17. Խորհրդի նիստերը կարող են անցկացվել՝ առկա, հարցման և հեռավար կարգով: Խորհրդի նիստերն անցկացվում են խորհրդի նախագահի մոտ, եթե խորհրդի նախագահը նիստի անցկացման տեղի վերաբերյալ այլ որոշում չի ընդունում:

18. Յուրաքանչյուր նիստ սկսվում է նիստի օրակարգի հաստատմամբ և նախորդ նիստում ընդունված որոշումների կատարման ընթացքի մասին զեկուցմամբ:

19. Խորհրդի որոշումներն ստորագրում են խորհրդի նախագահը և խորհրդի անդամները:

20. Խորհրդի նիստերին խորհրդատվական ձայնի իրավունքով կարող են մասնակցել հրավիրված պետական պաշտոնյաները:

21. Առանձնահատուկ դեպքերում (ելնելով աշխատանքների կարևորությունից՝ խորհրդի որոշմամբ) մրցութային առաջարկների փաթեթները կարող են բացվել հատուկ

հրավիրված խորհրդի նիստում՝ պահպանելով մրցույթի անցկացման համար սահմանված բոլոր կանոնները:

22. Անհրաժեշտության դեպքում խորհրդի նիստերին կարող են հրավիրվել օրակարգի հարցերին առնչվող համապատասխան կազմակերպության ներկայացուցիչները:

IV. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ

23. Խորհրդի նախագահը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարն է (այսուհետև՝ նախարար):

24. Խորհրդի նախագահը՝

ա) պատասխանատու է խորհրդի աշխատանքների արդյունավետ իրականացումը կազմակերպելու համար.

բ) ներկայացնում է խորհուրդը Հայաստանի Հանրապետության կառավարությունում և այլ կազմակերպություններում:

V. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

25. Խորհրդի կազմում ընդգրկվում են նախարարության պատասխանատու պաշտոնյաները՝ նախարարի ներկայացմամբ (այդ թվում՝ նախագահը), ինչպես նաև ընկերությունների ղեկավարները:

26. Խորհրդի այն անդամը, որը համաձայն չէ խորհրդի ընդունած որոշմանը, ներկայացնում է իր գրավոր հատուկ կարծիքը, որը կցվում է որոշմանը և գրառվում խորհրդի նիստի արձանագրության մեջ:

27. Խորհրդի անդամը, եթե համաձայն չէ խորհրդի որոշմանը, խորհրդի նիստի արդյունքների մասին զեկուցագիր է ներկայացնում իր վերադասին:

28. Խորհրդի անդամը հանդես է գալիս ի պաշտոնե և հիմնական աշխատանքից ազատվելու պահից դադարում է հանդիսանալ խորհրդի անդամ:

29. Խորհրդի անդամի պարտականությունները կարող են դադարեցվել խորհրդի նախագահի առաջարկությամբ:

30. Խորհրդի անհատական կազմը հաստատվում է նախարարի հրամանով:

VI. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

31. Խորհրդի քարտուղարին նշանակում է խորհրդի նախագահը՝ խորհրդի կազմից:

32. Խորհրդի քարտուղարը՝

ա) արձանագրում է խորհրդի նիստի քննարկումները և դրանց հիման վրա կազմում որոշումների նախագծերը.

բ) նախապատրաստում է նիստի օրակարգին վերաբերող համապատասխան նյութերը և կազմակերպում նյութերի տրամադրումը խորհրդի անդամներին.

գ) հետևում է խորհրդի որոշումների կատարմանը և խորհրդի նիստում զեկուցում դրանց կատարման ընթացքի մասին.

դ) վարում է խորհրդի աշխատանքների հետ կապված գործավարությունը.

ե) գրանցում է խորհրդի անդամների ներկայացրած գրավոր հատուկ կարծիքները.

զ) կազմակերպում է խորհրդի որոշումների համարակալումը և որոշումների պատճենները տրամադրում խորհրդի անդամներին.

է) խորհրդի որոշումները և նիստի արձանագրություններն անհրաժեշտության դեպքում ուղարկում է համապատասխան նախարարություններ ու գերատեսչություններ:

VII. ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

33. Խորհրդի աշխատակարգի մեջ փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու մասին առաջարկությունները՝ համապատասխան հիմնավորումներով, խորհրդի որոշմամբ ներկայացվում են նախարարին:

VIII. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

34. Խորհրդի գործունեությունը դադարում է նախարարի հրամանով:

«Հավելված № 2
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
2022 թվականի մայիսի «10»-ի
№ 826-Ա հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Դավիթ Խուդաթյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար (խորհրդի նախագահ)
Կարեն Սարգսյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական
Դավիթ Թունանյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական
Արամ Խաչատրյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ
Արմեն Մանուկյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներդրումային ծրագրերի

	համակարգման, տնտեսագիտական վերլուծության և մոնիթորինգի վարչության պետ
Նարեկ Ապիտոնյան	«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար
Դավիթ Միրզոյան	«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն
Էդուարդ Մարտիրոսյան	«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն

»: